Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդի ՀՎՀՀ - 02624655

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ
տնօրենների խորհրդի 09/12/2013թ. որոշմամբ

(արձանագրություն թիվ 3)

ՓՈՓՈԽՎԱԾ Է

Տնօրենների խորհրդի 26/03/2015թ.-ի որոշմամբ
(արձանագրություն թիվ 13)

(ՀՀ ԿԲ գրանցում՝ 18/04/2015թ.)

Տնօրենների խորհրդի 12/10/2017թ.-ի որոշմամբ
(արձանագրություն թիվ 27)

(ՀՀ ԿԲ գրանցում՝ 10/11/2017թ.)

Տնօրենների խորհրդի 21/10/2020թ.-ի որոշմամբ
(արձանագրություն թիվ 42)

(ՀՀ ԿԲ գրանցում՝ 01/12/2020թ.)

Տնօրենների խորհրդի 11/01/2024թ.-ի որոշմամբ
(արձանագրություն թիվ 58)

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Hakob Andreasyan Digitally signed by Hakob Andreasyan Date: 2024.01.25 16:54:24 +04'00' ՀԱԿՈԲ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

_____ ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Digitally signed by Martin Galstyan
Date: 2024.02.06 10:23:26 AMT
Reason: Գրանցած է 23.01.2024թ.

Amundi acba
ASSET MANAGEMENT

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» փակ բաժնետիրական ընկերության
Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ
ԿԱՆՈՆՆԵՐ
(նոր խմբագրություն)

Amundi-ACBA Asset Management

ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10, տարածք 100-101
Հեռ./Tel. + (374) 11 31-00-00, info-armenia@amundi.com
10 Vazgen Sargsyan, suite 100-101, Yerevan 0010, RA

A joint venture between **Amundi** and **acba.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սահմանումներ 3
1. Ընդհանուր դրույթներ 5
2. Ֆոնդի փայերը 6
3. Ֆոնդի փայերի թողարկումը, բաժանորդագրությունը, մարումը և դրանց կասեցումը 6
4. Մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները 8
5. Կառավարչի իրավունքներն ու պարտականությունները 9
6. Ներդրումային քաղաքականություն և դրա հետ կապված ռիսկեր 10
7. Ածանցյալ ֆինանսական գործիքներ. կիրառման շրջանակը և ռիսկերը 16
8. Ֆոնդի եկամուտը 17
9. Ներդրումային որոշումների կայացման ընթացակարգը և պատասխանատու անձինք 17
10. Վճարներ և ծախսեր 18
11. Փայի հաշվարկային արժեք, տեղաբաշխման և մարման գներ 20
12. ՁԱԱ հաշվարկը 22
13. Փայերի փոխանակման ընթացակարգը 27
14. Ծրագրային վճարների հաշվարկի և իրականացման ընթացակարգը 27
15. Փայերի հետգնումն ապահովագրական ընկերությանը փոխանցելու նպատակով 28
16. Ֆոնդի կառավարչի և պահառուի փոփոխությունը 28
17. Որոշակի գործառնությունների պատվիրակման ընթացակարգը 28
18. Ֆոնդում Կառավարչի սեփական ներդրումների և մարումների ընթացակարգ 29
19. Մասնակիցներին փոխհատուցման կարգը 29
20. Տեղեկատվության հրապարակում 30
21. Ֆոնդի տեսակի փոփոխումը, միացումը և դադարումը 31
22. Կանոնների ընդունումը, փոփոխությունը և վերաշարադրումը 31

Սահմանումներ

Սույն կանոններում (այսուհետ՝ Կանոններ) մեծատառերով նշված և այլ կերպ չսահմանված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

- «ՀՀ»՝ Հայաստանի Հանրապետություն,
- «Կառավարություն»՝ ՀՀ կառավարություն,
- «Կենտրոնական բանկ»՝ ՀՀ կենտրոնական բանկ,
- «Օրենք»՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք,
- «Կառավարիչ»՝ «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ,
- «Ամունդի»՝ Կառավարչի բաժնետեր հանդիսացող Ամունդի Ասեթ Մենեջմենթ բաժնետիրական ընկերություն,
- «Ֆոնդ»՝ «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ,
- «Ֆոնդերի կառավարիչ»՝ Կառավարչի աշխատակից, ով կառավարում է Ֆոնդի ակտիվները,
- «Ֆոնդի փայ»՝ Ռեեստրավարի կողմից Ֆոնդի կազմում թողարկված ներդրումային արժեթուղթ, որը վկայում է դրա սեփականատիրոջ՝ Ֆոնդի ակտիվներում մասնակցություն ունենալու իրավունքը,
- «Մասնակից»՝ Փայի սեփականատեր (Կառավարիչը մասնակից չի հանդիսանում),
- «Կուտակային հատկացում»՝ Փայեր ձեռք բերելու նպատակով սոցիալական վճար կատարող Մասնակցի համար (օգտին) կատարվող դրամական հատկացում, որը ձևավորվում է այդ սոցիալական վճարներից և Օրենքի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցներից,
- «Ռեեստրավար»՝ իրավաբանական անձ, որը ՀՀ Կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա վարում է մասնակիցների ռեեստրը, ինչպես նաև իրականացնում է Օրենքով և Կառավարության հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ գործառույթներ,
- «Պահառու»՝ Ֆոնդի ակտիվների պահառության ծառայություն մատուցող անձ, որը «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով և Կառավարչի հետ կնքված պայմանագրի հիման վրա ի պահ է ընդունում, պահպանում և հաշվառում է Ֆոնդի ակտիվները, իրականացնում է Ֆոնդի ակտիվների կառավարման հետ

կապված գործարքների սպասարկումը և դրանց հիման վրա ակտիվների փոխանցումը, ինչպես նաև իր իրավասությունների շրջանակում վերահսկում է Կառավարչի գործունեությունը՝ ի շահ Մասնակիցների,

- «Երաշխիքային ֆոնդ»՝ Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն ստեղծված ֆոնդ,
- «Ռեեստրավարի վճար»՝ Ռեեստրավարի ծառայությունների դիմաց վճար, որը կատարվում է Կառավարչի հաշվին՝ նրա հետ կնքված պայմանագրի համաձայն,
- «Պահառուի վճար»՝ Պահառուի ծառայությունների դիմաց վճար, որը կատարվում է Կառավարչի հաշվին՝ նրա հետ կնքված պայմանագրի համաձայն,
- «Կառավարչի պարգևավճար»՝ Կառավարչի ծառայությունների դիմաց վճար, որը սահմանվում է Օրենքով,
- «ՁԱԱ»՝ զուտ ակտիվների արժեք,
- «Գնահատման օր»՝ այն օրն է, որի համար հաշվարկվում է ֆոնդի ՁԱԱ-ն:
- «ՁԱԱ-ի հաշվարկման օր»՝ այն օրն է երբ հաշվարկվում և Ռեեստրավարին է ներկայացվում ֆոնդի ՁԱԱ-ն:
- Կտրման պահ՝ որոշակի պահ, որի դրությամբ հաշվարկվում են ֆոնդի զուտ ակտիվների արժեքը: Հայաստանի Հանրապետությունում թողարկված գործիքների համար Կտրման պահն է Գնահատման օրվա ժամը 23:59-ը, իսկ արտասահմանյան գործիքների համար Կտրման պահն է ֆոնդի ադմինիստրավորման գործակալի ժամանակով ՁԱԱ-ի հաշվարկման օրվա 08:30-ը:
- «Անուիտետ»՝ ապահովադրի կողմից պայմանագրով նախատեսված գումարի միանվագ կամ պայմանագրով նախատեսված պարբերականությամբ վճարումն ապահովագրողին, որի դիմաց ապահովագրողը պարտավորվում է պայմանագրով նախատեսված ժամկետում և պարբերականությամբ ապահովադրին կամ շահառուին վերադարձնել վճարված գումարը և պայմանագրով երաշխավորված եկամուտը,
- «Ծրագրային վճար»՝ Մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո նրա անունով բացված կենսաթոշակային հաշվում հաշվառված կենսաթոշակային ֆոնդի փայերի մարման հաշվին ամսական կտրվածքով սահմանված կարգով տրամադրվող գումար,
- «Միանվագ վճար»՝ պարտադիր կուտակային կենսաթոշակի տեսակ, ինչպես սահմանված է Օրենքով,

- «Շահառու»՝ կենսաթոշակային տարիքը լրացած Մասնակից կամ նրա ժառանգ, որն իրավունք է ստացել Օրենքով սահմանված կարգով ժառանգել Ֆոնդի փայերը կամ Անուիտետը,
- «ԵՄ»՝ Եվրոպական Միություն,
- «ՏՀԶԿ»՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն,
- «Արտաքին աուդիտոր»՝ օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձ,
- «Կանոնակարգ 10/17»՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17,
- «Կանոնակարգ 10/12»՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 309 Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի կազմն ու առավելագույն չափը» կանոնակարգ 10/12,
- «Կանոնակարգ 10/04»՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշմամբ հաստատված «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ» կանոնակարգ 10/04,
- «Փայի փոխանակում»՝ Փայերի փոխանակում Օրենքով սահմանված իմաստով,
- «Ոչ փոխարկելի արժույթ»՝ ցանկացած արտասահմանյան արժույթ, որը հիմնականում օգտագործվում է ներքին գործարքների համար և ազատորեն չի վաճառվում արտարժույթի (forex) շուկայում,

Սույն փաստաթղթում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքով, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Կենտրոնական բանկի կանոնակարգերով սահմանված իմաստները:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ֆոնդի կառավարչի լրիվ անվանումն է՝ «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» փակ բաժնետիրական ընկերություն:

1.2. Ֆոնդի լրիվ անվանումն է՝ «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ:

1.3. Ֆոնդը պայմանագրային, ստանդարտ, բաց ներդրումային ֆոնդ է:

1.4. Կառավարչի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0010 ք. Երևան, Վ. Սարգսյան փող. 10, տարածք 100-101:

1.5. Ֆոնդի հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների պատրաստման կազմակերպման, ֆոնդի զուտ ակտիվների արժեքի, փայերի հաշվարկային արժեքի հաշվարկման գործառույթները Կառավարիչը պատվիրակել է «ԿԱՍԵԻՍ Ֆանդ ադմինիստրեյշն» բաժնետիրական ընկերությանը (CACEIS Fund Administration) (այսուհետ՝ Ֆոնդի ադմինիստրավորման գործակալ):

1.6. Ֆոնդի ադմինիստրավորման գործակալի հասցեն է՝ Ֆրանսիա, 75013 ք. Փարիզ, 1-3, Փլեյս Վալիուբերտ:

1.7. Ֆոնդի պահառուն և Մասնակիցների ռեեստրավարը «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն է (այսուհետ՝ Պահառու կամ Ռեեստրավար՝ կախված իմաստից):

1.8. Պահառուի(Ռեեստրավարի) հասցեն է ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ:

1.9. Սույն Կանոնների և ՀՀ օրենքների կամ նորմատիվ այլ իրավական ակտերի միջև հակասության պարագայում գործում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

2. Ֆոնդի փայերը

2.1. Ֆոնդի փայը ներդրումային արժեթուղթ է, որը հավաստում է Օրենքով սահմանված կարգով Մասնակցի՝ կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունքը: Ֆոնդի անունից կարող են թողարկվել միայն մեկ դասի փայեր: Մասնակցին պատկանող փայերը ներկայացնում են նրա բաժնեմասը Ֆոնդի ակտիվներում:

2.2. Ֆոնդի փայերը կարող են տիրապետվել, կառավարվել և օգտագործվել միայն Օրենքով սահմանված նպատակների համար: Ֆոնդի փայերով հավաստվող իրավունքները չեն կարող փոխանցվել, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով:

2.3. Կառավարության կողմից որոշված Ֆոնդի փայերի սկզբնական անվանական արժեքը սահմանվել է 1000(հազար) ՀՀ դրամ:

3. Ֆոնդի փայերի թողարկումը, բաժանորդագրությունը, մարումը և դրանց կասեցումը

3.1. Ֆոնդի փայի հաշվարկային արժեքը, որը սահմանվում է սույն Կանոնների 11-րդ մասով, Կառավարչի կողմից Ռեեստրավարին է ուղարկվում մինչև ՁԱԱ-ի հաշվարկման օրվա ժամը 15:00-ն (այսուհետ՝ Վերջնաժամկետ): Եթե նոր ՁԱԱ-ն Ռեեստրավարին չի փոխանցվում մինչև Վերջնաժամկետը, Ռեեստրավարը հիմք է ընդունում վերջին հասանելի ՁԱԱ-ն:

3.2. Ռեեստրավարը տիրապետում է Ֆոնդի համար ստացված օրական ընդհանուր գումարների մասին տեղեկատվությանը: Այդ ծավալը բաժանելով Ֆոնդի վերջին հասանելի բաժանորդագրության գնի/ՁԱԱ-ի վրա՝ Ռեեստրավարը ստանում է Ֆոնդի համար օրական թողարկվելիք Ֆոնդի փայերի քանակը: Ռեեստրավարը Ֆոնդի նոր փայերի թողարկման հետ մեկտեղ համապատասխան դրամական միջոցները փոխանցում է Ֆոնդի դրամային հաշվին: Եթե դրամական միջոցները ստացվում են ոչ թե Ֆոնդի փայերի թողարկման օրը, այլ հաջորդ օրը(օրերին), ապա նոր թողարկված Ֆոնդի փայերի գծով դեռևս չստացված դրամական միջոցների չափով ՁԱԱ-ի հաշվարկում ձևակերպվում է դեբիտորական պարտք:

3.3. Կառավարիչը հաշվարկում և հրապարակում է փայի հաշվարկային արժեքը բոլոր այն օրերի համար, որոնք հանդիսանում են աշխատանքային օրեր միաժամանակ և ՀՀ-ում և Ադմինիստրավորման գործակալի երկրում: Ֆոնդի փայերը կարող են թողարկվել և մարվել միայն ՀՀ-

ում աշխատանքային օրերին: Ընդ որում, Ռեեստրավարի կողմից տվյալ աշխատանքային օրվա Երևանի ժամանակով մինչև ժամը 15:15-ը Ֆոնդի համար ստացված միջոցների հաշվին Ֆոնդի փայեր թողարկվում են օրական մեկ անգամ՝ հիմք ընդունելով այդ աշխատանքային օրվա ընթացքում Կառավարչի կողմից հրապարակված Ֆոնդի փայի հաշվարկային արժեքը:

3.4. Ինչպես սահմանված է Օրենքով և Կենտրոնական բանկի կանոնակարգերով, Ֆոնդի փայերի մարում կարող է տեղի ունենալ միայն հետևյալ դեպքերում.

3.4.1. Թույլատրելի վաղաժամկետ մարում (Ֆոնդի փայերի մարման իրավունք մինչև կենսաթոշակային տարիքի լրանալը),

3.4.2. Միանվագ վճարի իրականացում,

3.4.3. Անուիտետի գնում,

3.4.4. Ծրագրային վճարների իրականացում,

3.4.5. Փայերի փոխանակում,

3.4.6. Կառավարչին պատկանող Ֆոնդի փայերի մարում,

3.4.7. Ֆոնդի դադարում,

3.4.8. Օրենքով սահմանված այլ դեպքեր:

3.5. Մասնակիցներից մարման դիմումներ ստանալուց հետո Ռեեստրավարը սառեցնում է դիմումներում նշված քանակով Ֆոնդի փայերը: Մարման գինը և մարվող ընդհանուր ծավալն ավտոմատ որոշվում է Ռեեստրավարի կողմից, երբ Մասնակիցներից ստացվում են մարման դիմումները: Մինչև ժամը 15:00-ն Ռեեստրավարը Կառավարչի մոտ տեղադրված ծրագրային համակարգում նրա համար հասանելի է դարձնում մարվելիք Ֆոնդի փայերի քանակի և մարվող ընդհանուր գումարի մասին տեղեկատվությունը: Կառավարիչը դրամական միջոցները Ռեեստրավարին է փոխանցում տվյալները հասանելի դառնալուց հետո 7-աշխատանքային օրվա ընթացքում:

3.6. Կառավարիչը փայերի փոխանակման գործարքների դեպքում կարող է կասեցնել Ֆոնդի փայերի թողարկումը կամ մարումը միայն հետևյալ դեպքերում.

3.6.1. Կարգավորվող շուկաների բնականոն գործունեության ձախողումներ, որոնք խոչընդոտում են Ֆոնդի ակտիվների մեծ մասի արժեքների ճշգրիտ որոշմանը կամ ակտիվների վաճառքին՝ Ֆոնդի փայերի մարումներն իրականացնելու համար: Այդ ձախողումների ոչ ամբողջական ցանկը ներառում է. Ֆոնդի ակտիվների գնանշումների դադարում, տեղեկատվական համակարգերի խափանումներ որոշակի կարգավորվող շուկաներում, որոշակի շուկայի տեղակայման երկրում տեղի ունեցած բնական աղետներ կամ այլ ֆորս-մաժորային իրավիճակներ և այլն:

3.6.2. Գործառնական և տեխնիկական խնդիրներ, որոնք խոչընդոտում են Կառավարչի կամ երրորդ անձի (օրինակ՝ բրոքերի) շուկայում առևտրային գործունեությանը և այդպիսով կարող են բացասաբար ազդել Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքների վրա: Այդ դեպքերի ոչ ամբողջական ցանկը ներառում է. կապի հետ խնդիրներ, ֆոնդերի կառավարման համար օգտագործվող համակարգերի խնդիրներ, բրոքերների և գործընկերների մոտ առաջացած տեխնիկական և այլ գործառնական զգալի խնդիրներ:

3.6.3. Ֆոնդի փայերի մարման դեպքում իրացվելիության խնդիրներ, որոնք խոչընդոտում են Ֆոնդի ակտիվների վաճառքին և կարող են առաջացնել հնարավոր կորուստներ Ֆոնդի մնացող մասնակիցների համար:

3.6.4. Ֆոնդի փայերի մարումները կարող են առաջացնել մեկ փայի հաշվով ԶԱԱ-ի զգալի և/կամ օրենսդրորեն սահմանված նվազագույն մակարդակից(եթե այդպիսիք առկա են) նվազում:

3.6.5. Այլ պատճառներ, որոնք անհնար են դարձնում Ֆոնդի ակտիվների կամ պարտավորությունների գնահատումը: Դրանց ոչ ամբողջական ցանկը ներառում է. բնական աղետներ և այլ ֆորս-մաժորային իրավիճակներ, Ֆոնդի ադմինիստրավորման գործակալի, Պահառուի հետ խնդիրներ և այլն:

Կասեցման դեպքում փոխանակման ենթակա փայերի հետգնումը (մարումը)կամ նոր ֆոնդերի փայերի թողարկումը կարող է կասեցվել ոչ ավելի, քան երեք ամիս ժամկետով՝ նախապես տեղեկացնելով Կենտրոնական բանկին, մասնակիցների ռեեստրը վարողին և պահառուին փայերի հետգնման (մարման) կամ նոր ֆոնդերի փայերի թողարկման կասեցման մասին՝ նշելով դրա հիմքերը, ինչպես նաև այդ մասին տեղեկատվությունը երեք օրվա ընթացքում հրապարակելով մասնակիցների ռեեստրը վարողի և կառավարչի պաշտոնական ինտերնետային կայքում:

4. Մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները

4.1. Մասնակիցն իրավունք ունի Ռեեստրավարից անվճար ստանալ իր կենսաթոշակային հաշվում արտացոլված տվյալների մասին տեղեկատվությունը ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյակային պարբերականությամբ, ընդ որում տարեկան տեղեկատվությունը կարող է ստանալ, ոչ ուշ, քան նախորդ օրացուցային տարվան հաջորդող տարվա մինչև ապրիլի 15-ը, իսկ եռամսյակային տեղեկատվությունը՝ ոչ ուշ, քան նախորդ եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը:, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով:

4.2. Մասնակիցը կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք է ձեռք բերում, եթե.

4.2.1. Լրացել է մասնակցի կենսաթոշակային տարիքը,

4.2.2. Լրացել է Մասնակցի 55 տարին, և նրա կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքը բավարարում է սույն Կանոնների 4.4.3 կետով սահմանված պայմանը,

4.3. Կուտակային կենսաթոշակների տեսակներն են.

4.3.1. Անուիտետներ,

4.3.2. Ծրագրային վճարներ,

4.3.3. Միանվագ վճարներ:

4.4. Կախված Մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա Ֆոնդի փայերի ընդհանուր հաշվարկային արժեքից՝՝ Մասնակիցն իր կուտակային կենսաթոշակը կարող է ստանալ հետևյալ ձևերով.

4.4.1. Եթե մասնակցի միջոցները Օրենքի համաձայն հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, ապա Մասնակիցն իրավունք ունի կուտակային կենսաթոշակը ստանալու անուիտետի կամ ծրագրային վճարների կամ միանվագ վճարի ձևով,

4.4.2. Եթե Մասնակցի միջոցները հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը մեծ է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից, բայց փոքր այդ կենսաթոշակի հնգապատիկից կամ հավասար է այդ կենսաթոշակի հնգապատիկին, ապա Մասնակիցը պարտավոր է Ֆոնդի փայերի մարման արդյունքում ստացված գումարի չափով Օրենքով սահմանված կարգով կնքել անուիտետի պայմանագիր,

4.4.3. Եթե Մասնակցի միջոցները, Օրենքի համաձայն հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, ապա Մասնակիցը պարտավոր է իր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի մի մասի մարման արդյունքում ստացված միջոցների հաշվին կնքել Անուիտետի պայմանագիր այն գումարի չափով, որը հավասարաչափ ամսական վճարների վերածելու

դեպքում ամսական գումարը կկազմի հիմնական կենսաթոշակի հնգապատիկը, իսկ մնացած մասը Մասնակիցն իրավունք ունի ստանալու Անուիտետի կամ Ծրագրային վճարների կամ Միանվագ վճարի ձևով:

4.5. Անուիտետ ստանալու իրավունքը ծագում է անկախ Մասնակցի՝ այլ աղբյուրներից անուիտետ, պետական կենսաթոշակ կամ նպաստ ստանալու հանգամանքից:

4.6. Մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ, ներառյալ՝ նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը, ներկայացնելու իր կենսաթոշակային հաշվում առկա (այդ թվում՝ Մասնակցի կողմից նախկինում ներկայացված դիմումի հիման վրա ծրագրային վճարի տեսքով վճարվող կենսաթոշակը) միջոցները (անկախ դրանց չափից) ամբողջությամբ ստանալու պահանջ, եթե առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը.

4.6.1. Մասնակիցն օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ,

4.6.2. Կառավարության սահմանած ցանկում ներառված հիվանդություններով հիվանդանալու (վիճակներում գտնվելու) դեպքում՝ առողջապահության բնագավառում Կառավարության լիազոր մարմնի տված եզրակացության հիման վրա,

4.6.3. ՀՀ-ում աշխատող օտարերկրացի Մասնակիցը վերադառնում է իր մշտական բնակության երկիր:

4.7. Ֆոնդի փայը Մասնակցի կողմից չի կարող.

4.7.1. Գրավադրվել,

4.7.2. Ներդրվել իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

4.7.3. Նվիրաբերվել կամ օտարվել որևէ այլ եղանակով, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,

4.7.4. Օգտագործվել որևէ այլ եղանակով, քան սահմանված է Օրենքով:

4.8. Մասնակցի պարտավորությունների համար Մասնակցին պատկանող Ֆոնդի փայերի վրա բռնագանձում չի կարող տարածվել մինչև նրա կուտակային կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելը:

4.9. Մասնակիցն իրավունք ունի անվճար փոխելու նախկինում ընտրված պարտադիր կենսաթոշակային ֆոնդը ՝ իր կենսաթոշակային հաշվում ունեցած փայերը և ապագա կենսաթոշակային հատկացումները Կառավարչի կամ այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող ֆոնդ ուղղելու համար, եթե այլ բան սահմանված չէ Օրենքով:

5. Կառավարչի իրավունքներն ու պարտականությունները

5.1. Կառավարիչն իրավունք ունի.

5.1.1. Կառավարել Ֆոնդի ակտիվներն իր մասնագիտական դատողությամբ և զգուշավորությամբ,

5.1.2. Ստանալ Կառավարչի պարգևավճար սույն Կանոնների համաձայն,

5.1.3. Պատվիրակել իր գործառույթների մի մասը երրորդ անձանց, բացառությամբ այն գործառույթների, որոնց պատվիրակումը չի թույլատրվում սույն Կանոններով կամ օրենսդրությամբ,

5.1.4. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով փոխել Պահառուին,

5.1.5. Իրացնել օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

5.2. Ֆոնդի անունից հանդես գալիս Կառավարիչը և նրա աշխատակիցները պետք է գործեն Մասնակիցների լավագույն շահերից ելնելով, իրենց իրավունքներն ու պարտականություններն իրականացնեն Մասնակիցների նկատմամբ, բարեխղճորեն, ողջամտորեն և պատշաճ մասնագիտական մակարդակով, միևնույն ժամանակ առանց երաշխավորելու որոշակի արդյունքի, եկամտաբերության կամ եկամտի ստացումը:

5.3. Կառավարիչը պարտավոր է.

5.3.1. Ներդնել ներքին հսկողության համապատասխան համակարգ,

5.3.2. Պահպանել Ֆոնդում սեփական ներդրումների նվազագույն ծավալը (օրենսդրության պահանջների համաձայն),

5.3.3. Արդյունավետ կազմակերպական և կառավարչական միջոցներ ձեռնարկել՝ ներդրումային առաջարկությունների կազմման և իրականացման գործընթացում շահերի բախման կանխարգելման նպատակով,

5.3.4. Մասնակիցներից ստացված միջոցները ներդնել սույն Կանոնների համաձայն,

5.3.5. Հետևել օրենսդրության պահանջներին:

6. Ներդրումային քաղաքականություն և դրա հետ կապված ռիսկեր

Ա. Ներդրումային նպատակը, խթանները և խոչընդոտները

6.1. Կառավարչի հիմնական ներդրումային նպատակն է փորձել առավելագույնի հասցնել ակտիվների ընդհանուր եկամտաբերությունը՝ հիմնվելով լավագույն ջանքերի գործադրման սկզբունքի վրա՝ ներդրումներն ամբողջությամբ ուղղելով կայուն եկամտային գործիքներ:

6.2. Ակնկալվում է, որ Մասնակիցների կողմից Ֆոնդի փայերի մարման հետևանքով Ֆոնդից դրամական միջոցների արտահոսքը կարող է գերազանցել Մասնակիցների կողմից Ֆոնդի փայերի ձեռքբերմամբ պայմանավորված Ֆոնդին կատարվող նոր կուտակային հատկացումների մեծությունն ոչ շուտ, քան Ֆոնդի հիմնադրումից 20 տարի անց: Այս իրավիճակը կարող է փոփոխվել կախված՝ օրենսդրության փոփոխություններից և այլ պայմաններից : Ֆոնդի երկար ժամանակային հորիզոնը և վաղաժամկետ մարումների ցածր հավանականությունը նպաստում են ցածր իրացվելիության ռիսկի:

6.3. Ֆոնդի հիմնադրման պահին ժամանակային հորիզոնը երկարաժամկետ է:

Բ. Պորտֆելի կառավարման քաղաքականություն և ռազմավարություն

6.4. Ֆոնդը ներդրումներ է իրականացնում միայն կայուն եկամտային գործիքներում կամ այնպիսի գործիքներում, որոնք իրենց հիմքում ունեն միայն կայուն եկամտային գործիքներ, ինչպես նաև այն ներդրումային ֆոնդերի փայերում, որոնց կանոնների (կանոնադրության) համաձայն՝ ֆոնդի ակտիվների առնվազն 90 տոկոսը կարող է ներդրվել միայն բանկային ավանդներում, պարտքային արժեթղթերում: ՀՀ-ում դրամով ներդրումներ կարող են իրականացվել պետական և կորպորատիվ պարտատոմսերում, բանկային ավանդներում, ինչպես նաև այլ թույլատրելի գործիքներում: Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել արտարժույթով գնանշվող դրամային շուկայի գործիքներում, պետական և կորպորատիվ պարտատոմսերում, ինչպես նաև ներդրումային ֆոնդերում, որոնք ներդրումներ են իրականացնում միայն վերոհիշյալ գործիքներում և այլ թույլատրելի գործիքներում:

Հեջավորման նպատակով Ֆոնդի ակտիվները կարող են են ներդրվել ածանցյալ ֆինանսական գործիքներում: Ածանցյալ ֆինանսական գործիքը համարվում է հեջավորման նպատակով

կնքված ,երբ առկա է ուղիղ կապ համապատասխան ածանցյալ գործիքի և հեջավորվող ռիսկի միջև::

Գ. Ներդրումների հետ կապված հիմնական ռիսկերը

6.5. Ակտիվները կայուն եկամտային գործիքներում (պարտատոմսեր, կայուն եկամտային արժեթղթերում ներդրումներ կատարող ֆոնդեր և այլն) տեղաբաշխելիս՝ Ֆոնդը հակված է, բայց ոչ սահմանափակված հետևյալ ռիսկերով.

6.5.1. Տոկոսադրույքի ռիսկ, որը կապված է շուկայական գնի ռիսկի և արժեկտրոնի վերաներդրման ռիսկի հետ: Շուկայական գնի ռիսկը ի հայտ է գալիս, երբ պարտատոմսերի գները նվազում են տոկոսադրույքների բարձրացման հետևանքով: Արժեկտրոնի վերաներդրման ռիսկն ի հայտ է գալիս, երբ տոկոսադրույքների անկման դեպքում ստացված արժեկտրոնային եկամուտը վերաներդրվում է ավելի ցածր տոկոսադրույքով: Երկարաժամկետ և առավել ցածր արժեկտրոնային եկամտաբերություն ունեցող պարտատոմսերն առավել հակված են տոկոսադրույքի ռիսկի:

6.5.2. Արտարժութային ռիսկ, որը ի հայտ է գալիս, երբ Ֆոնդի ՁԱԱ-ն կարող է նվազել, եթե արտասահմանյան արժույթով գնանշվող գործիքի արժույթը արժեզրկվում է ՀՀ դրամի նկատմամբ:

6.5.3. Վարկային կամ դեֆոլտի ռիսկ, որը ի հայտ է գալիս, երբ պարտատոմս թողարկողը ժամանակին չի վճարում պարտատոմսերի գծով տոկոսագումարները և մայր գումարը, կամ երբ այդ վճարումները կատարելու թողարկողի կարողության հանդեպ բացասական ակնկալիքը հանգեցնում է այդ պարտատոմսի գնի անկման՝ նվազեցնելով Ֆոնդի եկամուտը:

6.5.4. Իրացվելիության ռիսկ՝ ռիսկն այն բանի, որ շուկայական գործարքների սակավության պատճառով արժեթղթերի առքը կամ վաճառքը չի կարող իրականացվել բավականին արագ՝ հնարավոր կորուստներից խուսափելու կամ դրանք նվազեցնելու համար:

6.5.5. Վաղաժամկետ մարման ռիսկ, երբ տոկոսադրույքների նվազման ժամանակահատվածում վաղաժամկետ մարման իրավունքով պարտատոմսերի թողարկողները կարող են վաղաժամկետ մարել բարձր արժեկտրոնային տոկոսադրույքով կամ եկամտաբերությամբ արժեթղթերը մինչև դրանց մարման ժամկետի լրանալը, որի հետևանքով Ֆոնդը կարող է կորցնել պարտատոմսի վաղաժամկետ մարման գինը գերազանցող արժեքի հավելաճը և ստիպված լինել վաղաժամկետ մարման արդյունքում ի հայտ եկած դրամական հոսքերը վերաներդնել ավելի ցածր տոկոսադրույքով, ինչը կարող է հանգեցնել Ֆոնդի եկամուտների նվազման:

6.5.6. Գնաճի ռիսկ, ռիսկն այն բանի, որ ստացվող դրամական հոսքերի արժեքը գնողունակության տեսանկյունից կարող է նվազել:

6.5.7. Երկրի/տարածաշրջանային/ համաշխարհային ռիսկ, ռիսկն այն բանի, որ համաշխարհային, տարածաշրջանային և/կամ կոնկրետ որևէ երկրին առանձնահատուկ իրադարձությունները, ինչպիսիք են՝ քաղաքական բախումները, ֆինանսական անկայունությունները, բնական աղետները, համաճարակները և այդպիսի այլ իրադարձությունները, որոնք հնարավոր չէ կանխատեսել և կանխարգելել, բացասաբար կարող են ազդել օտարերկրյա պետությունների կառավարությունների, կառավարական գործակալությունների, ընկերությունների կողմից թողարկված արժեթղթերի արժեքի վրա: Երկրի/տարածաշրջանային/ համաշխարհային ռիսկերը կարող են բացասաբար անդրադառնալ Ֆոնդի գործունեության արդյունքների վրա:

6.5.8. Արտարժույթի հեջավորման ռիսկ, որը ի հայտ է գալիս, երբ Ֆոնդի կողմից կնքված արտարժույթի հեջավորման գործարքները ամբողջովին չեն ծածկի Ֆոնդի արտարժութային ռիսկերը:

6.5.9. Գործընկերոջ ռիսկ, որը ի հայտ է գալիս, երբ Ֆոնդի որևէ կոնկրետ գործարքի գծով գործընկերը ի վիճակի չի լինի կամ չի ցանկանա կատարել իր ֆինանսական պարտավորությունները:

Դ. Թույլատրելի գործիքներ, սահմանափակումներ

6.6. Թույլատրելի օտարերկրյա ֆինանսական գործիքներ.

6.6.1. Բանկային հաշիվներ և ավանդներ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) կամ Եվրոպական միության (այսուհետ՝ԵՄ) անդամ պետությունների բանկային համակարգը վերահսկող լիազորված մարմնի կողմից արտոնագրված և վերահսկվող ֆինանսական կազմակերպություններում,

6.6.2. ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների պետական պարտատոմսեր, գանձապետական արժեթղթեր և ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կենտրոնական բանկերի թողարկած արժեթղթեր, ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կողմից կամ վերջիններիս կենտրոնական բանկերի կողմից ամբողջությամբ երաշխավորված արժեթղթեր, ինչպես նաև վերազգային ընկերությունների կողմից թողարկված արժեթղթեր,

6.6.3. ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթեր,

6.6.4. ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող ներդրումային ֆոնդերի փայեր (բաժնետոմսեր), որոնք ամբողջությամբ ներդրումներ են իրականացնում կայուն եկամտային ֆինանսական գործիքներում,

6.6.5. Ածանցյալ ֆինանսական գործիքներ՝ միայն հեջավորման նպատակով:

6.7. ՀՀ-ում թողարկված թույլատրելի գործիքներ.

6.7.1. Բանկային հաշիվներ և ավանդներ, եթե տվյալ բանկը չի գտնվում անվճարունակության (սնանկության) գործընթացում կամ չի գտնվում պատժամիջոցների տակ: Պատժամիջոցների տակ գտնվող բանկում ներդրումներ կատարելու հնարավորությունը որոշվում է Կառավարչի կողմից: Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել Ֆոնդի պահառուի, նրանց ղեկավարների, Ֆոնդի մասնակիցների ռեեստրավարի և անկախ աուդիտն իրականացնող անձի, ինչպես նաև նրանց և Ֆոնդի Կառավարչի հետ փոխկապակցված անձանց կողմից առաջարկվող ժամկետային ավանդներում Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ (յուրաքանչյուր ներդրման դեպքի համար):

6.7.2. ՀՀ կամ Կենտրոնական բանկի թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթեր,

6.7.3. ՀՀ-ում գործող կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր, ինչպես նաև նոր թողարկված արժեթղթեր, որոնց թողարկման և (կամ) առաջարկի պայմանների համաձայն՝ դրանք պետք է թույլատրվեն 6.6 և 6.7 կետերով նախատեսված ՀՀ-ում գործող կամ որևէ այլ կարգավորվող շուկայում առևտրին դրանց թողարկմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում:

6.7.4. Այն ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթեր, որոնք ամբողջապես ներդրումներ են իրականացնում կայուն եկամտային ֆինանսական գործիքներում և վերահսկվում են Կենտրոնական բանկի կողմից,

6.7.5.Աճանցյալ ֆինանսական գործիքներ՝ միայն հեջավորման նպատակով:

6.8. Սահմանափակումներ և դիրքերի սահմանաչափեր

6.8.1. Արտասահմանյան արժույթով ընդհանուր ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ընդհանուր ակտիվների 40 տոկոսը:

6.8.2. Ոչ փոխարկելի արտասահմանյան արժույթով կատարվող ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ընդհանուր ակտիվների 3 տոկոսը:

6.8.3. Բանկային հաշիվներում և ավանդներում, այդ թվում՝ բանկում միջոցների ավանդագրումը հավաստող արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 40 տոկոսը: Միևնույն ժամանակ մեկ բանկում, ինչպես նաեւ «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ փոխկապակցված ճանաչված բանկերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 10 տոկոսը: Վերը նշված սահմանաչափերը չեն տարածվում Ֆոնդի պահառուական հաշիվների վրա: Ընդ որում, Ֆոնդի ակտիվները որպես ավանդ կարող են ներդրվել միայն այնպիսի օտարերկրյա բանկում, որն ունի առնվազն Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ», Մուդիզի «Բաա» խմբի՝ «Բաա3» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ» վարկանիշ:

6.8.4. Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության համայնքների, Հայաստանի Հանրապետության և Կենտրոնական բանկի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 50 տոկոսը, ընդ որում, մեկ թողարկումում (տրանշում) ներդրումների արժեքը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 20 տոկոսը: Այս սահմանափակումը չի տարածվում միայն կենսաթոշակային ֆոնդերի համար թողարկված արժեթղթերում կատարվող ներդրումների վրա, որի դեպքում մեկ թողարկումում (տրանշում) ներդրումների արժեքը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 50 տոկոսը:

6.8.5. Արտասահմանյան պետության կամ այդ պետության կենտրոնական բանկի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 40 տոկոսը, ընդ որում, մեկ թողարկումում (տրանշում) ներդրումների արժեքը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 20 տոկոսը:

6.8.6. 6.8.4 և 6.8.5 կետերով նախատեսված արժեթղթերում ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 80 տոկոսը:

6.8.7. Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արժեթղթավորման հիմնադրամների թողարկած արժեթղթերում ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 5 տոկոսը:

6.8.8. Արժեթղթավորման հիմնադրամներից տարբերվող մեկ թողարկողի թողարկած արժեթղթերում ներդրումներ կարող են կատարվել Ֆոնդի ակտիվների մինչև 25 տոկոսի չափով, եթե դրանք ապահովված պարտատոմսեր են: Ապահովված պարտատոմսեր են համարվում.

6.8.8.1. Բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի համաձայն թողարկված ապահովված հիփոթեքային պարտատոմսերը,

6.8.8.2. Օտարերկրյա բանկերի թողարկած պարտքային արժեթղթերը, որոնց տեղաբաշխումից ստացված միջոցները ներդրվում են այնպիսի ակտիվներում, որոնք.

ա. Այդ պարտքային արժեթղթերի վավերականության ամբողջ ժամանակահատվածի համար բավարար ապահովություն (ծածկույթ) են դրանց գծով ամրագրված պարտավորությունների կատարման համար, և

բ. Թողարկող բանկի անվճարունակության կամ սնանկության դեպքում առաջնահերթորեն օգտագործվում են այդ պարտքային արժեթղթերի գծով դրանց սեփականատերերի հանդեպ պարտավորությունների կատարման (արժեթղթի մայր գումարի (անվանական արժեքի) և հաշվեգրված տոկոսների փոխհատուցման) համար:

6.8.9. Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել.

6.8.9.1. Մեկ կորպորատիվ թողարկողի պարտքային արժեթղթերի ավելի քան 40 տոկոսում,

6.8.9.2. Այլ ֆոնդի փայերի ավելի քան 25 տոկոսում:

6.8.10. Ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում կատարվող ներդրումները չպետք է գերազանցեն տվյալ Ֆոնդի ակտիվների 50 տոկոսը: Ընդ որում, ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 10 տոկոսը, եթե դրանք.

6.8.10.1. ՀՀ-ում գրանցված ֆոնդերի դեպքում բաց, հիրապարակային, ստանդարտ, տարատեսականացված ներդրումային ֆոնդեր չեն,

6.8.10.2. Արտասահմանյան պետությունում գրանցված ֆոնդերի դեպքում բաց և հիրապարակային ներդրումային ֆոնդեր չեն, որոնց կանոնների (կանոնադրության) համաձայն ներդրումային ֆոնդի ակտիվների առնվազն 90 տոկոսը պետք է ներդրվի միայն բանկային ավանդներում, պետական պարտատոմսերում, կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կամ թույլատրվող արժեթղթերում կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ իրացվելի ակտիվներում:

6.8.11. Միևնույն կառավարչի կողմից կառավարվող ներդրումային ֆոնդերում կամ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կառավարիչների ներդրումային ֆոնդերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 25 տոկոսը:

6.8.12. Մեկ թողարկողի արժեթղթերում ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 10 տոկոսը, իսկ փոխկապակցված թողարկողների արժեթղթերում ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 15 տոկոսը, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով:

6.8.13. Ֆոնդի ակտիվներում ընդգրկված մեկ անձի թողարկած արժեթղթերի (բացառությամբ ապահովված պարտատոմսերի), տվյալ անձի մոտ ներդրված բանկային ավանդների և տվյալ անձի հետ կնքված ածանցյալ գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 20 տոկոսը:

6.8.14. Ֆոնդի ակտիվներում ընդգրկված մեկ անձի թողարկած արժեթղթերի (այդ թվում՝ ապահովված պարտատոմսերի), տվյալ անձի մոտ ներդրված բանկային ավանդների և տվյալ անձի հետ կնքված ածանցյալ գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի տվյալ ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 30 տոկոսը:

6.8.15. Ածանցյալ ֆինանսական գործիքներում ներդրումներն իրականացվում են միայն հեջավորման նպատակով, երբ Ֆոնդը ներառում է այդ ածանցյալի հիմքում առկա հիմնական արժեթուղթը, կամ Ֆոնդին բնորոշ է հեջավորվող ռիսկը: Մեկ անձի հետ ածանցյալ գործիքով կնքված գործարքի չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների արժեքի 10 տոկոսը, եթե գործարքի կողմը բանկ է, և չի կարող գերազանցել 5 տոկոսը, եթե գործարքի կողմն այլ ֆինանսական կազմակերպություն է:

6.8.16. Մեկ արտասահմանյան պետությունում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել տվյալ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների 15 տոկոսը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ֆոնդի ակտիվներում ընդգրկված ներդրումային գործիքների դեպքում հնարավոր չէ հստակ որոշել որևէ կոնկրետ պետության մասնակցության աստիճանը: Կարգավորվող շուկայում գնանշվող ներդրումային ֆոնդում (exchange traded fund) և չգնանշվող ներդրումային ֆոնդում ներդրումներ կատարելու դեպքում, եթե տվյալ ֆոնդի ներդրումային քաղաքականությունը (կանոնները) նշում է, որ այդ ֆոնդը ներդրումներ է իրականացնում միայն մեկ երկրում, ապա այս սահմանափակումը հաշվարկվում է այդ երկրի համար: Եթե ներդրումային քաղաքականությունը (կանոնները) նշում է, որ այդ ֆոնդը ներդրումներ է իրականացնում մի շարք երկրներում և հնարավոր է պարզել յուրաքանչյուր երկրում ներդրումների ճշգրիտ կշիռը, ապա այս սահմանափակման հաշվարկի մեջ ընդգրկվում է տվյալ ֆոնդի գրանցման երկիրը: Եթե վերոնշյալ պայմաններից որևէ մեկը առկա չէ, ապա սահմանափակումը չի հաշվարկվում այդպիսի ֆոնդերում ներդրումների համար:

6.8.17. Ֆոնդի ակտիվները չեն կարող ձևավորվել փոխառու միջոցների հաշվին, բացառությամբ եթե փոխառությունները ներգրավվել են մինչև 3 ամիս մարման ժամկետով, և Ֆոնդի ակտիվների մինչև 10 տոկոսի չափով:

6.8.18. Ֆոնդի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակային և արժութային սահմանափակումների հաշվարկման համար հիմք է ընդունվում Ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքը:

6.8.19. Վերոնշյալ քանակային և արժութային սահմանափակումները տարածվում են Ֆոնդի վրա եթե Ֆոնդի ՁԱԱ-ն գերազանցում է երկու միլիարդ ՀՀ դրամը:

6.8.20. Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել.

6.8.20.1. Կառավարչի և Պահառուի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում: Սույն կետը չի տարածվում Կառավարչի (կամ դրա հետ փոխկապակցված անձի) կողմից կառավարվող այլ ֆոնդի փայերում (բաժնետոմսերում) ներդնելու դեպքի վրա, եթե առկա են հետևյալ բոլոր պայմանները.

ա. Ֆոնդի ներդրումային քաղաքականությունը չի հակասում Ֆոնդի ներդրումային նպատակներին,

բ. Չեն գանձվում փայերի (բաժնետոմսերի) մարման և բաժանորդագրման վճարներ,

գ. Կառավարչի կողմից կառավարվող ֆոնդի ակտիվներն իր կողմից կառավարվող մեկ այլ ֆոնդում ներդնելու դեպքում՝ նույն ակտիվները տարբեր ֆոնդերում ներդնելիս դրանցից չեն գանձվում կրկնակի պարգևավճարներ:

6.8.20.2. Կառավարչի կամ Պահառուի աուդիտն իրականացնող անձի թողարկած արժեթղթերում,

6.8.20.3. Կառավարչին կամ պահառուին խորհրդատվական ծառայություններ մատուցող անձանց թողարկած արժեթղթերում,

6.8.20.4. Ածանցյալ գործիքներում, բացառությամբ հեջավորման նպատակով ներդրումների,

6.8.20.5. Այն ակտիվներում, որոնց օտարումն արգելված կամ սահմանափակված է,

6.8.20.6. Անշարժ գույքում (ուղղակի կատարվող ներդրումներ) կամ այլ ֆիզիկական ակտիվներում (արվեստի գործեր, հուշադրամներ, սրբապատկերներ, հնաոճ ապրանքներ, թանկարժեք մեքենաներ և այլն):

6.8.21. Ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերը չեն կարող կարգավորվող շուկայից դուրս վաճառվել կամ ցանկացած այլ ձևով օտարվել.

6.8.21.1. Պահառուին,

6.8.21.2. Կառավարչին,

6.8.21.3. Վերոնշյալ անձանց կառավարման մարմնի անդամներին,

6.8.21.4. Վերոնշյալ անձանց նշված անձանց հետ փոխկապակցված անձանց:

6.8.22. Կառավարիչը և պահառուն չեն կարող մեկը մյուսին տրամադրել փոխառություններ կամ երաշխավորել պարտավորությունների կատարումը:

6.8.23. Կառավարիչը պարտավոր է ձեռնարկել քայլեր՝ համապատասխանեցնելու Ֆոնդի ներդրումները Օրենքի պահանջներին, և ապահովել հնարավոր առավելագույն շահութաբերություն, պահել ու խնայել Ֆոնդերի ակտիվները, եթե վերոնշյալ քանակային և արժութային սահմանափակումները խախտվել են որպես հետևանք.

6.8.23.1. Շուկայական գների փոփոխության, որոնք հիմք են հանդիսացել ակտիվների գնահատման համար,

6.8.23.2. Արտարժույթի փոխարժեքի փոփոխության,

6.8.23.3. Կազմակերպությունների միջև տնտեսական և կազմակերպական հարաբերությունների փոփոխության, որոնց արժեթղթերում ներդրվել են Ֆոնդի ակտիվները,

6.8.23.4. Կառավարչի կամքից անկախ և հսկողությունից դուրս այլ հանգամանքների:

6.8.24. Վերոնշյալ սահմանափակումների նկատմամբ ներդրումների համապատասխանությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ հայտնի է դարձել խախտման մասին:

6.8.25. Կառավարիչը պարտավոր է իրականացնել ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթերով ամրագրված իրավունքները՝ ելնելով բացառապես մասնակիցների շահերից:

7. Ածանցյալ ֆինանսական գործիքներ. կիրառման շրջանակը և ռիսկերը

7.1. Կառավարիչը Ֆոնդի անունից կարող է ներդրումներ կատարել ածանցյալ ֆինանսական գործիքներում: Մասնավորապես, ածանցյալներում կատարվող ուղղակի ներդրումները պետք է թույլ տան Կառավարչին հեջավորել Ֆոնդի ներդրումները: Կառավարիչը կարող է ներդրումներ կատարել ածանցյալ ֆինանսական գործիքներում միայն այն դեպքում, երբ ածանցյալ ֆինանսական գործիքներից սպասվող ռիսկերը և օգուտները համապատասխանում են Ֆոնդի ներդրումային նպատակներին, քաղաքականություններին, ռազմավարություններին, ռիսկերին և ներդրումային սահմանափակումներին, ինչպես ներկայացված է սույն Կանոններում: Ֆոնդի ակտիվները կարող են

ներդրվել ինչպես կարգավորվող շուկայում շրջանառվող այնպես էլ կարգավորվող շուկայում չշրջանարվող ածանցյալ ֆինանսական գործիքներում:

7.2. Ֆոնդի ակտիվներում ներառված բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքների հետ կապված ծածկույթի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքը:

7.3. Ակտիվների ընդհանուր արժեքը որոշվում է որպես Ֆոնդում ներառված բոլոր ակտիվների շուկայական արժեքների գումար:

8. Ֆոնդի եկամուտը

8.1. Ֆոնդի ակտիվներից ձևավորված ողջ եկամուտը, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. իրացված կապիտալի հավելաճ, կայուն եկամտաբերությամբ արժեթղթերի գծով տոկոսագումարների վճարումներ և այլն: Ստացված եկամուտը պետք է վերաներդրվի Ֆոնդում: Շահույթի բաշխում չի նախատեսվում:

8.2. Ֆոնդի եկամտաբերությունը հաշվարկվում է Կանոնակարգ 10/17-ով: Ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ տվյալները ենթակա են բացահայտման և հրապարակման՝ օրենսդրությամբ և սույն Կանոններով սահմանված պահանջների համաձայն:

9. Ներդրումային որոշումների կայացման ընթացակարգը և պատասխանատու անձինք

9.1. Ֆոնդի ակտիվների հաշվին ներդրումների իրականացման հետ կապված ռազմավարական որոշումները կայացվում են Կառավարչի ներդրումային հանձնաժողովի կողմից՝ հիմնվելով Ֆոնդերի կառավարիչների առաջարկների վրա: Հանձնաժողովի հիմնական առաքելություններն են սահմանել Ֆոնդի կառավարման հիմնական ուղղությունները, ակտիվների տեղաբաշխման ռազմավարությունները, հետևել ֆոնդի ներդրումներին և եկամտաբերությանը, պարբերաբար վերանայել ակտիվների տեղաբաշխման ռազմավարությունը, որպեսզի ապահովվի դրանց համապատասխանությունը փոփոխություններին, որոնք կարող են ի հայտ գալ արտաքին միջավայրում,կարգավորման շրջանակում կամ ռազմավարական նպատակներում: Հանձնաժողովի նախագահը Կառավարչի գործադիր տնօրենն է կամ նրան փոխարինող անձը: Հանձնաժողովի անդամներն են՝ ներկայացուցիչներ Ամունդի-ԱԿԲԱ-ի և Ամունդիի ֆոնդերի կառավարման թիմերից, ինչպես նաև Ամունդի-ԱԿԲԱ-ի և Ամունդիի ռիսկերի ստորաբաժանումների ներկայացուցիչները:Այլ փորձագետներ կարող են մասնակցել հանձնաժողովին, եթե անհրաժեշտ լինի: Ներդրումային որոշումների կատարումը իրականացվում է Ֆոնդի կառավարիչների կողմից:

9.2. Ֆոնդի կառավարման գործունեությունը հիմնվում է վերոնշյալ կառավարման գործընթացների վրա՝ հաշվի առնելով օրենսդրական և ներքին իրավական ակտերի պահանջները և սույն Կանոններում կամ ներքին ընթացակարգերում ու որոշումներում սահմանված սահմանափակումները: Այս ուղենիշների շրջանակներում Ֆոնդերի կառավարիչը պատասխանատու է իր ներդրումների և ներդրումների մարման որոշումների համար:

9.3. Ֆոնդերի կառավարիչների որոշումները պետք է հաշվի առնեն Կառավարչի և Կառավարչի ներդրումային հանձնաժողովի նախանշած ֆինանսական և մակրոտնտեսական ուղենիշները: Ֆոնդերի կառավարիչը պատասխանատու է ֆինանսական գործիքների ընտրության և իր սպասումներից և շուկայական իրավիճակից ելնելով ֆինանսական գործիքների առքի կամ վաճառքի համար: Ֆոնդերի կառավարչին իր որոշումների կայացման ընթացքում աջակցելու համար նրան տրվել է Ամունդիի վարկային և ֆինանսական վերլուծության հասանելիություն: Նա կարող է

նաև օգտագործել ցանկացած արտաքին վերլուծական փաստաթղթեր, եթե այդ վերլուծությունը պատշաճ է և ունի բավարար հիմք:

10. Վճարներ և ծախսեր

10.1. Կառավարիչը ստանում է Կառավարչի գլոբալ պարգևավճար, որը հաշվարկվում է Ֆոնդի ՁԱԱ-ի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ: Ռեեստրավարի և Պահառուի վճարները (բացառությամբ՝ Կանոնների 10.8 բաժնում ներկայացված արտասահմանյան գործարքների կատարման վճարների) վճարվում են Կառավարչի գլոբալ պարգևավճարից:

10.2. Կառավարչի գլոբալ պարգևավճարի տարեկան չափը սահմանվում է Ֆոնդի ՁԱԱ-ի 0.85 տոկոսի չափով:

10.3. Կառավարչի գլոբալ պարգևավճարը հաշվեգրվում է օրական կտրվածքով և վճարվում ամսական կտրվածքով՝ ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 10-րդ աշխատանքային օրը: Կառավարչի գլոբալ պարգևավճարը (ԿԳՊ) t-րդ օրվա համար հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ԿԳՊ}_t = \frac{(\text{Ակտիվներ}_t - \text{Հաշվեգրված պարտավորություններ}_t - \text{Հաշվեգրված վճարներ}_{t-1} + \text{Վճարված վճարներ}_t) * \text{ԿԳՊ դրույք}}{\text{ՓՕԹ}}$$

Որտեղ:

- ԿԳՊ $_t$՝ Կառավարչի գլոբալ պարգևավճարի օրական գումարն է,
- Ակտիվներ $_t$՝ t-րդ օրվա դրությամբ ակտիվների ընդհանուր շուկայական արժեք,
- Հաշվեգրված պարտավորություններ $_t$՝ t-րդ օրվա դրությամբ պարտավորությունների ընդհանուր շուկայական արժեք – t-րդ օրվա դրությամբ հաշվեգրված վճարների արժեքը,
- Հաշվեգրված վճարներ $_{t-1}$՝ հաշվեգրված Կառավարչի գլոբալ պարգևավճար t-1-րդ օրվա դրությամբ + հաշվեգրված Երաշխիքային ֆոնդի վճար t-1-րդ օրվա դրությամբ + հաշվեգրված աուդիտի վճար t-1-րդ օրվա դրությամբ,
- Վճարված վճարներ$_t$ - վճարված Կառավարչի գլոբալ պարգևավճար t-րդ օրվա ընթացքում + վճարված Երաշխիքային ֆոնդի վճար t-րդ օրվա ընթացքում + վճարված աուդիտի վճար t-րդ օրվա ընթացքում,
- ԿԳՊ դրույք՝ Կառավարչի գլոբալ պարգևավճարի դրույք, որը ներառում է նաև Պահառուի և Ռեեստրավարի վճարի դրույքը,
- ՓՕԹ՝ տարվա փաստացի օրերի թիվ (365 կամ 366 օր):

10.4. Ռեեստրավարի վճարը սահմանվում է Ռեեստրավարի և Կառավարչի միջև կնքված պայմանագրով: Այն Կառավարչի կողմից վճարվում է ամսական կտրվածքով՝ Ռեեստրավարից ստացված հարկային հաշվի հիման վրա՝ Ռեեստրավարի սակագների վերաբերյալ կանոններում նշված ժամկետներում և կարգով:

10.5. Պահառուի վճարը սահմանվում է Պահառուի և Կառավարչի միջև կնքված պայմանագրով: Այն վճարվում է ամսական կտրվածքով՝ Պահառուից ստացված հարկային հաշվի հիման վրա՝ Պահառուի սակագների վերաբերյալ կանոններում նշված ժամկետներում և կարգով:

10.6. Ֆոնդը վճարում է եռամսյակային երաշխիքային վճարներ կենսաթոշակային ֆոնդերի Երաշխիքային ֆոնդին՝ Ֆոնդի ՁԱԱ-ի 0,02%-ի չափով:

10.7. Երաշխիքային ֆոնդի վճարը հաշվեգրվում է օրական կտրվածքով և վճարվում եռամսյակային կտրվածքով,՝ ոչ ուշ, քան եռամսյակին հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը: : Երաշխիքային ֆոնդի վճարը (ԵՖՎ) t-րդ օրվա դրությամբ հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$\text{ԵՖՎ}_t = \frac{(\text{Ակտիվներ}_t - \text{Հաշվեգրված պարտավորություններ}_t - \text{Հաշվեգրված վճարներ}_{t-1} + \text{Վճարված վճարներ}_t) * \text{ԵՖՎ դրույք}}{\text{ՓՕԹ}}$$

Որտեղ,

- ԵՖՎ $_t$՝ Երաշխիքային ֆոնդի վճարի օրական գումարն է,
- Ակտիվներ $_t$՝ t-րդ օրվա դրությամբ ակտիվների ընդհանուր շուկայական արժեքն է,
- Հաշվեգրված պարտավորություններ $_t$՝ t-րդ օրվա դրությամբ պարտավորությունների ընդհանուր շուկայական արժեքը – t-րդ օրվա դրությամբ հաշվեգրված վճարների արժեքը,
- Հաշվեգրված վճարներ $_{t-1}$՝ հաշվեգրված Կառավարչի գլոբալ պարգևավճար t-1-րդ օրվա դրությամբ + հաշվեգրված Երաշխիքային ֆոնդի վճար t-1-րդ օրվա դրությամբ + հաշվեգրված աուդիտի վճար t-1-րդ օրվա դրությամբ,
- Վճարված վճարներ$_t$ - վճարված Կառավարչի գլոբալ պարգևավճար t-րդ օրվա ընթացքում + վճարված Երաշխիքային ֆոնդի վճար t-րդ օրվա ընթացքում + վճարված աուդիտի վճար t-րդ օրվա ընթացքում,
- ԵՖՎ դրույք՝ Երաշխիքային ֆոնդի վճարի դրույք,
- ՓՕԹ՝ տարվա փաստացի օրերի թիվ (365 կամ 366 օր):
- Եթե հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ երաշխիքային ֆոնդի միջոցները, բացառությամբ վարկերի, փոխառությունների, երաշխիքների, դրամաշնորհների, նվիրատվությունների և նվիրաբերությունների, գերազանցում են նախորդ եռամսյակի վերջին օրվա դրությամբ երաշխիքային վճարներ կատարող բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի 2.5 տոկոսը, ապա կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները պարբերական երաշխիքային վճարներ չեն կատարում: Այդ մասին երաշխիքային ֆոնդը պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներին և Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական ոլորտի պետական լիազորված մարմնին հայտնում է մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա հինգերորդ աշխատանքային օրը: Սույն մասի համաձայն՝ պարբերական երաշխիքային վճարների կատարումը դադարում է (վճարների կատարումը վերսկսվում է) երաշխիքային ֆոնդի կողմից այդ մասին հայտնելու օրվան հաջորդող ամսվանից:

10.8. Ֆոնդի ակտիվների հաշվին կարող են իրականացվել այլ ծախսեր՝ գործարքների կնքման հետ կապված վճարներ, արժեթղթերի և դրամական միջոցների փոխանցումների գծով վճարներ, Ֆոնդի ներգրավված վարկերի և փոխառությունների գծով վճարվելիք տոկոսներ, ռեպո և հակադարձ ռեպո գործարքների գծով վճարվելիք տոկոսներ: Այդ ծախսերի տարեկան մեծությունը չի կարող գերազանցել կանոնակարգ 10/12-ով սահմանված մակարդակը, հակառակ դեպքում

Կառավարիչը պետք է փոխհատուցի Ֆոնդին իր սեփական միջոցներից՝ավել կատարված ծախսերի չափով:

10.9. Ֆոնդի եկամուտները և ծախսերը հաշվառվում են հաշվեգրման սկզբունքով, բացառությամբ Ֆոնդի օտարերկրյա պահառուի մոտ հաշվառվող դրամական միջոցների և արժեթղթերի փոխանցման և վերջնահաշվարկի հետ կապված միջնորդավճարների և այլ վճարների, որոնք ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում են ֆոնդի պահառուի հետ կնքված պայմանագրով սահմանված էլեկտրոնային հասցեից մինչև Կտրման պահը ստացած համապատասխան հիմնավորող հաշվարկային փաստաթղթի ստացման ամսաթվով և վերագնահատվում են օրական կտրվածքով մինչև փաստացի վճարումը եթե Կանոնակարգ 10/04-ով այլ բան սահմանված չէ :

10.10. Գործարքների իրականացման տարբեր փուլերում ի հայտ եկած վճարները, որպես կանոն, վճարվում են ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 10-րդ աշխատանքային օրը:

10.11. Արտասահմանյան բրոքերային միջնորդավճարները ներառվում են գործարքի զուտ արժեքի մեջ և վճարվում՝ վերջնահաշվարկի պահին:

10.12. ՀՀ-ում իրականացված գործարքների բրոքերային միջնորդավճարները՝ ներառյալ ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայի վճարները (եթե այդպիսիք առկա են) ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում են գործարքի կատարման օրը և վճարվում են վերջնահաշվարկի օրը:

10.13. Ֆոնդի հիմնական դրամական (ենթապահառուական) հաշիվներից կանխիկ դրամական միջոցների փոխանցման միջնորդավճարները վճարվում են գումարի փոխանցման օրը կամ հաշվեգրվում են դրամական միջոցների փոխանցման օրվա համար հաշվարկվող ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում:

10.14. Ֆոնդի աուդիտի վճարը վճարվում է Ֆոնդի ակտիվների հաշվին՝ Կենտրոնական բանկի Կանոնակարգ 10/12-ով սահմանված առավելագույն գումարի շրջանակում:

10.15. Ֆոնդի կողմից վճարման ենթակա աուդիտի տարեկան վճարի չափը կախված է աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման տարվան նախորդող տարվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ Ֆոնդի ՁԱԱ-ի և Կառավարչի կողմից կառավարվող երեք պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի գումարային ՁԱԱ-ի հարաբերակցությունից:

10.16. Աուդիտի վճարը հաշվեգրվում է օրական կտրվածքով և վճարվում աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն: Աուդիտի վճարը t-րդ օրվա համար հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Աուդիտի վճար}_t = \frac{\text{Ֆոնդի աուդիտի վճար}}{365 \text{ կամ } 366}$$

Որտեղ՝

- Աուդիտի վճար $_t$՝ t-րդ օրվա դրությամբ աուդիտի վճար,

10.17. Վերը նշված բոլոր վճարները կլորացվում են 2 նիշի ճշտությամբ:

11. Փայի հաշվարկային արժեք, տեղաբաշխման և մարման գներ

11.1. Ֆոնդի տեղաբաշխված փայերի թիվը որոշվում է Ռեեստրավարի համակարգում հասանելի վերջին հաշվետվությամբ: Ֆոնդի ՁԱԱ-ն հաշվարկվում է յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար համապատասխան շուկաների փակումից և համապատասխան գների հայտնի դառնալուց հետո՝ հիմք ընդունելով կտրման պահի դրությամբ վերջին հայտնի տվյալները: Ֆոնդի ՁԱԱ-ի

հարաբերությունը տեղաբաշխված փայերի թվին կազմում է Ֆոնդի միավոր փայի ՁԱԱ-ն (հաշվարկային արժեքը): Ֆոնդի փայի բաժանորդագրման գինը համընկնում է Ֆոնդի միավոր փայի ՁԱԱ-ի հետ: Փայի հետգնման գինը կարող է փոքր լինել Փայի հաշվարկային արժեքից 1 տոկոսով, որը գանձվում է հօգուտ կառավարչի, եթե այլ բան սահմանված չէ սույն Կանոններով:

11.2. Հետգնման միջնորդավճարը չի կիրառվում Ռեեստրավարի պահանջով կատարվող հետևյալ գործարքների դեպքում.

11.2.1. Երբ Ֆոնդի փայերի մարման արդյունքում ձևավորված միջոցներն ուղղվում են Մասնակցի կենսաթոշակի վճարումներին՝ ծրագրային կամ միանվագ վճարի տեսքով կամ փոխանցվում են ընտրված ապահովագրական ընկերությանը՝ Անուիտետի ձեռքբերման նպատակով կամ Օրենքով նախատեսված դեպքերում՝ միջոցների դուրսբերման այլ թույլատրելի դեպքերում,

11.2.2. Մասնակցի կողմից Ֆոնդի իր փայերը Կառավարչի այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում,

11.2.3. Այն դեպքում, երբ փայերի մարումը հետևանք է Ֆոնդի դադարեցման՝ Օրենքով նախատեսված դեպքերում,

11.2.4. Մասնակցի կողմից 12 ամսվա ընթացքում առաջին անգամ Ֆոնդի փայերն այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող ֆոնդի փայերով փոխանակելու դեպքում, ինչպես սահմանվում է Օրենքով,

11.2.5. Կենսաթոշակային հաշիվը բացելուց հետո Մասնակցի կողմից Ֆոնդի փայերի առաջին անգամ փոխանակման դեպքում,

11.2.6. ժառանգի կողմից Օրենքով սահմանված կարգով ժառանգված Ֆոնդի փայերի առաջին փոխանակման գործարքի դեպքում:

11.3. Եթե ժառանգը ներկայացրել է ժառանգված Ֆոնդի փայերի մարման և մարման արդյունքում ձևավորված դրամական միջոցները Օրենքով սահմանված կարգով միանվագ ստանալու դիմում, ապա Ֆոնդի փայերի մարման ժամանակ գանձվում է լրացուցիչ 2 տոկոս մարման վճար՝ Ֆոնդի օգտին:

11.4. Փայի հաշվարկային արժեքն՝ Կառավարչի կողմից հաստատվելուց հետո ուղարկվում է Ռեեստրավարին, ինչպես նաև հրապարակվում է Կառավարչի ինտերնետային կայքում Կենտրոնական բանկի կանոնակարգ 10/09-ով սահմանված կարգով:

11.5. Եթե Ֆոնդի ադմինիստրավորման գործակալը չի հաշվարկում Ֆոնդի փայի պաշտոնական հաշվարկային արժեքը մինչև վերոնշյալ վերջնաժամկետը, Կառավարիչը Ֆոնդի ադմինիստրավորման գործակալին և Ռեեստրավարին է տրամադրում Ֆոնդի փայի գնահատված հաշվարկային արժեքը՝ վերջիններիս համակարգերում գրանցելու համար:

11.6. Եթե Կառավարիչը չի կարող Ռեեստրավարին տրամադրել Ֆոնդի փայի հաշվարկային արժեքը մինչև վերջնաժամկետը, Ռեեստրավարի համակարգում ավտոմատ կերպով գրանցվում է նախորդ հայտնի Ֆոնդի փայի հաշվարկային արժեքը:

11.7. Փայի հաշվարկային արժեքը, թողարկման և մարման գները կլորացվում են ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ:

12. ԶԱԱ հաշվարկը

12.1. ԶԱԱ-ի հաշվարկը հիմնվում է ՀՀ օրենքների և կանոնակարգերի, ֆրանսիական հաշվապահական հաշվառման ստանդարտների, ինչպես նաև սույն կանոնների պահանջների վրա:

12.2. Զուտ ակտիվների արժեքի հաշվարկման հիմնական տարրերը Ֆոնդի զուտ ակտիվներն են (ակտիվներ՝ հանած կուտակված պարտավորություններ) և փայերի թիվը:

12.3. Փայի հաշվարկային արժեքը t-րդ օրվա համար հաշվարկվում է՝ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը բաժանելով այդ օրվա դրությամբ փայերի թվի վրա համաձայն հետևյալ բանաձևի՝

$$\text{Փայի հաշվարկային արժեք}_t = \frac{\text{Զուտ ակտիվների արժեք}_t}{\text{Փայերի թիվ օրվա վերջում}_t}$$

Որտեղ՝

- Զուտ ակտիվներ$_t$= Ակտիվներ$_t$ – Կուտակված պարտավորություններ$_t$
- Ակտիվներ$_t$ = Ֆոնդի ակտիվների շուկայական արժեք$_t$ (ներառյալ՝ դրամական միջոցներ և դրամական շուկայի գործիքներ),
- Կուտակված պարտավորություններ$_t$ = հաշվեգրված վճարներ$_t$ + պարտավորություններ վերջնահաշվարկի չենթարկված արժեթղթերի գծով$_t$ + այլ պարտավորություններ$_t$,
- Փայերի թիվ օրվա վերջում$_t$ = Փայերի թիվ օրվա սկզբում$_t$ + տեղաբաշխված փայեր t-րդ օրվա ընթացքում - մարված փայեր t-րդ օրվա ընթացքում,
- Եթե t-րդ օրը նախորդում է ոչ աշխատանքային օրվա (օրերի), ապա ոչ աշխատանքային օրվա (օրերի) ընթացքում ձևավորված մարման ենթակա փայերը ներառվում են հաջորդ աշխատանքային օրվա փայի հաշվարկային արժեքի հաշվարկում:

Կլորացման կանոններ՝

- Զուտ ակտիվների արժեքի հաշվարկում փայերի թիվը կլորացվում է ստորակետից հետո 6 նիշի ճշտությամբ, այն դեպքում երբ փայի հաշվարկային արժեքը՝ 4 նիշի ճշտությամբ:

12.4. *Դրամական միջոցների և բանկային ավանդների գնահատում*

12.4.1. Բանկային հաշիվների և ավանդների գնահատումը իրականացվում է դրանց համապատասխանաբար Բանկային հաշվում և ավանդային հաշվում առկա մնացորդի և հաշվեգրված ու չստացված տոկոսների հիման վրա:

- Օրական հաշվեգրում$_t$ = (Ավանդի մնացորդ$_{t-1}$ * անվանական տոկոսադրույք) / օրերի թիվ

12.4.2. Օրերի թիվը կարող է լինել 360 365 կամ 366:ՀՀ-ում բանկային միջոցները և ավանդները գնահատելիս եթե t-րդ օրը նախորդում է ոչ աշխատանքային օրվա (օրերի), t-րդ օրվա դրությամբ տոկոսների հաշվեգրումը ներառում է հաշվեգրված տոկոսները նաև առաջիկա ոչ

աշխատանքային օրվա(օրերի) համար, բացառությամբ 12.14.1 և 12.14.2 կետում սահմանված դեպքերի:

Կլորացման կանոններ.

- ՀՀ դրամով արտահայտված հաշիվների համար, բոլոր մնացորդները կլորացվում են ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ,
- Արտարժույթով արտահայտված հաշիվների համար, բոլոր մնացորդները կլորացվում են ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ:

12.5. *ՀՀ-ում թողարկված պարտատոմսերի գնահատում*

12.5.1. Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված պետական դրամային պարտատոմսերը գնահատվում են Կենտրոնական բանկի կողմից հրապարակված վերջին հասանելի եկամտաբերության կորի հիման վրա:

12.5.2. Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով արտահայտված կարգավորվող շուկայում գնանշվող կորպորատիվ պարտատոմսերի գնահատման գների հիերարխիան հետևյալն է՝

ա. Գնահատման օրվա կարգավորվող շուկայի փակման գին,

բ. Լավագույն առքի և լավագույն վաճառքի գների միջին թվաբանականը՝ գնահատման օրվա դրությամբ կարգավորվող շուկայի առևտրային նստաշրջանի փակման պահին,

գ. Եթե վերոնշյալ գները հասանելի չեն (կամ գոյություն չունեն), պարտատոմսը պետք է գնահատվի ա և բ կետերում սահմանված հաջորդականությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ վերոնշյալ գները հասանելի չեն վերջին 30 աշխատանքային օրերի ընթացքում,

դ. Եթե վերոնշյալ գները հասանելի չեն վերջին 30 աշխատանքային օրերի ընթացքում, պարտատոմսի արդարացի գինը հաշվարկվում է Կառավարչի կողմից:

12.5.3. ՀՀ-ում կարգավորվող շուկայում դեռևս չգնանշվող կորպորատիվ պարտատոմսերը մինչև կարգավորվող շուկայում գնանշվելը գնահատվում են դրանց ձեռքբերման գնով, իսկ հետագա վերագնահատումը իրականացվում է Կառավարչի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերի կողմից դրանց վերջին ձեռքբերման գնով: Այն դեպքում, երբ պարտատոմսի տեղաբաշխման ժամանակահատվածում վերջինս արժեկտրոն է վճարում, ապա այդ պարտատոմսը վերագնահատվում է արժեկտրոնի վճարման օրվա տեղաբաշխման գնով:

Կլորացման կանոններ՝

- Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված պետական պարտատոմսերի գները արտահայտվում են 100 միավորի նկատմամբ և կլորացվում են 8 նիշի ճշտությամբ,
- Հայաստանի Հանրապետությունում թողարկված կորպորատիվ պարտատոմսերի գները կլորացվում են մինչև 8 նիշի ճշտությամբ,
- Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով արտահայտված պետական և կորպորատիվ պարտատոմսերի ընդհանուր շուկայական արժեքները կորացվում են 2 նիշի ճշտությամբ:

12.6. *Արտարժույթ*

12.6.1. Ակտիվների և պարտավորությունների գնահատումը, ներառյալ նրանք, որոնք արտահայտված են արտարժույթով, իրականացվում է ՀՀ դրամով:

12.6.2. Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների գնահատումը իրականացվում է հետևյալ հիերարխիայի համաձայն.

ա. գնահատման օրվա կտրման պահի դրությամբ՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արտարժույթի առուվաճառքի սակարկություններ իրականացնող անձի կողմից կազմակերպված արտարժույթի շուկայում տվյալ արտարժույթով առևտրային նստաշրջանի վերջին գործարքի գին,

բ. Կենտրոնական բանկի կողմից հրապարակված գնահատման օրվա դրությամբ արտարժույթի փոխարժեք:

Կլորացման կանոններ.

- Կառավարիչն օրական կտրվածքով Ֆոնդի ադմիստրավորման գործակալին է ուղարկում հակադարձված արտարժույթի փոխարժեքներ (1/օրիգինալ փոխարժեք)՝ կլորացված 10 նիշի ճշտությամբ,
- Ֆոնդի ադմինիստրավորման գործակալը հակադարձում է դրանք 10 նիշի ճշտությամբ:

Բացահայտում՝

Որպես կանոն, վերոնշյալ կլորացումը կարող է աննշան տարբերություն առաջացնել արտարժույթի օրիգինալ փոխարժեքի և Ֆոնդի ադմինիստրավորման գործակալի կողմից արտարժութային ակտիվների և պարտավորությունների գնահատման ժամանակ կիրառվող փոխարժեքների միջև:

12.7. Ցուցակված օտարերկրյա պարտքային արժեթղթերի ինչպես նաև ՀՀ անունից թողարկված արտարժույթով արտահայտված պարտքային արժեթղթերի գնահատում

12.7.1. Ցուցակված օտարերկրյա պարտատոմսերի, ինչպես նաև ՀՀ անունից թողարկված արտարժույթով արտահայտված պարտատոմսերի գնահատումը իրականացվում է՝ արդարացի շուկայական արժեքի գաղափարի հիման վրա:

12.7.2. Օտարերկրյա կարգավորվող շուկաներում գնանշվող, ինչպես նաև ՀՀ անունից թողարկված արտարժույթով արտահայտված պարտատոմսերի գնահատման համար գների հիերարխիան հետևյալն է (անհրաժեշտ տվյալները վերցվում են համաձայն Կառավարչի ներքին իրավական ակտերով սահմանված միջազգային ֆինանսական շուկաներում ընդունված տեղեկատվական աղբյուրների առաջնահերթության).

ա. Վերջին հասանելի միջին փակման գին, որը հաշվարկվում է որպես տարբեր աղբյուրներից ստացված առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ լավագույն առքի և լավագույն վաճառքի գնանշումների միջին թվաբանական,

բ. Գնահատման օրվան նախորդող 30 օրերի կտրվածքով հասանելի միջին փակման գին,

գ. Եկամտաբերության կորի հիման վրա հաշվարկված վերջին հասանելի գին:

Կլորացման կանոններ

- Օտարերկրյա պարտատոմսերի գները կլորացվում են մինչև 4 նիշի ճշտությամբ, կախված շուկայական տվյալների աղբյուրի տրամադրած գնից,
- Օտարերկրյա պարտատոմսերի արժեքի դրամային համարժեքը կլորացվում է 2 նիշի ճշտությամբ:

12.7.3. Եթե վերջին գործարքի կամ վերջին հայտնի գնի ամսաթվից հետո (վերոնշյալ 30 օրերի ընթացքում) տեղի է ունեցել տվյալ արժեթղթի կամ թողարկողի հետ կապված որևէ էական իրադարձություն, Կառավարիչը պետք է համապատասխանաբար ճշգրտի արժեթղթերի գինը՝ հնարավորինս արտացոլելով արժեթղթի իրական շուկայական արժեքը:

12.8. *Ֆոնդերի փայերի գնահատումը*

12.8.1. Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված ֆոնդերի փայերի (ETFs) և այլ փակ ֆոնդերի (որոնք հրապարակում են օրական փայերի հաշվարկային արժեքներ) գնահատումը իրականացվում է գնահատման օրը կտրման պահի դրությամբ տվյալ ֆոնդի փայի վերջին հրապարակված հաշվարկային արժեքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ գնահատման օրը կտրման պահի դրությամբ տվյալ ֆոնդի փայի վերջին հայտնի փակման գնով: Եթե ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) գծով գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրվա համար հրապարակվել է սույն կետով սահմանված նոր հաշվարկային արժեք, ապա տվյալ ֆոնդի փայի (բաժնետոմսի) գնահատման համար կարող է հիմք ընդունվել նոր հրապարակված հաշվարկային արժեքը::

12.8.2. Բաց ներդրումային ֆոնդերի գինը որոշվում է գնահատման օրվա դրությամբ վերջին հասանելի փայերի հաշվարկային արժեքի հիման վրա կամ ավելի թարմ փայի հաշվարկային արժեքով, առկայության դեպքում:

12.8.3. Վերոնշյալ տվյալների աղբյուրն ընտրվում է ըստ Կառավարչի ներքին իրավական ակտերով սահմանված միջազգային ֆինանսական շուկաներում ընդունված տեղեկատվական աղբյուրների առաջնահերթության:

Կլորացման կանոններ.

- Ֆոնդերի փայերի գները կլորացվում են ստորակետից հետո մինչև 4 նիշի ճշտությամբ, կախված շուկայական տվյալների աղբյուրի տրամադրած գնից,,
- Ֆոնդի փայերի արժեքի դրամային համարժեքը կլորացվում է 2 նիշի ճշտությամբ:

12.9. *Վերջնահաշվարկի չենթարկված ֆոնդերի գնահատումը*

12.9.1. Գնանշվող ֆոնդերի և չգնանշվող բաց ներդրումային ֆոնդերի փայերն արտացոլվում են Ֆոնդի ՁԱԱ-ի հաշվարկում գործարքի օրվա դրությամբ: Նախքան վերջնահաշվարկը, գնանշվող ֆոնդերը ձևավորում են դեբիտորական պարտավորություն (վաճառված լինելու դեպքում) կամ կրեդիտորական պարտք (գնված լինելու դեպքում): Գործարքի զուտ գումարը վերագնահատվում է արտարժույթի օրական փոխարժեքով:

12.9.2. Բաց ֆոնդերի դեպքում, եթե նախքան Պահառուի կողմից ֆոնդի փայի վերջնական գնի վերաբերյալ հաստատման ստացումը հայտնի է դառնում գործարքի նոր զուտ գումարի մասին, մինչև Կտրման պահը, ապա ձևավորված դեբիտորական/կրեդիտորական պարտավորությունները վերագնահատվում են գործարքի նոր զուտ գումարի հիման վրա: Պահառուից վերոնշյալ հաստատումը մինչև Կտրման պահը ստանալու դեպքում, բաց ֆոնդերի գծով պարտավորությունները վերագնահատվում են վերջնական հայտնի գնի հիման վրա:

12.10. *Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների գնահատում*

12.10.1. Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների գնահատումն իրականացվում է համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

12.11. *Ածանցյալ ֆինանսական գործիքների գնահատումը*

Ածանցյալ ֆինանսական գործիքների գանահատումն իրականացվում է համաձայն Կանոնակարգ 10/04-ի:

12.12. *Ժամկետանց պարտքային արժեթղթերի և դեբիտորական պարտքերի գնահատումը*

12.12.1. Եթե թողարկողը չի կատարում պարտքային արժեթղթի գծով իր պարտավորությունները (այդ թվում՝ արժեթղթի մարում, մասնակի մարում, արժեկտրոնի վճարում), ապա տվյալ պարտքային արժեթղթի գծով ստացվելիք գումարների գնահատման ժամանակ դրանք նվազեցվում են վճարման նախատեսված օրվան հաջորդող՝

- 90 օրվա ընթացքում 10 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով հավասարաչափ գումարի տեսքով,
- 91 օրից 180 օրվա ընթացքում 10 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով հավասարաչափ գումարի տեսքով,
- 181 օրից 270 օրվա ընթացքում 30 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով հավասարաչափ գումարի տեսքով,
- 271 օրից 360 օրվա ընթացքում մնացած 50 տոկոսի չափով՝ օրական կտրվածքով հավասարաչափ գումարի տեսքով:

12.13. Կառավարիչը որոշակի աշխատանքային օրերի կարող է չհաշվարկել ֆոնդի ՁԱԱ-ն, եթե

12.13.1. Ֆոնդի ՁԱԱ-ի արժեքի հաշվարկումը պատվիրակված է այլ անձի, որը օտարերկրյա կազմակերպություն է, և

12.13.2. Այդ օրերը նախապես հրապարակվել են կառավարչի ինտերնետային կայքում: Ընդ որում, այդ օրերը կարող են ներառել միայն 12.13.1. ենթակետում նշված անձի համար ոչ աշխատանքային օրերը , ինչպես նաև շաբաթ և կիրակի օրերը (անկախ դրանց աշխատանքային լինելու հանգամանքից):

12.14. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի ՁԱԱ-ի հաշվարկը կատարվում է հետևյալ կանոններով՝

12.14.1. Տարեվերջյան ՁԱԱ-ն տարվա վերջին աշխատանքային օրվա պաշտոնական ՁԱԱ-ն է: Այն հիմնված է տարվա վերջին օրվա կտրման պահի դրությամբ հասանելի գործիքների գների և տարվա վերջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսների և միջնորդավճարների վրա:

12.14.2. Եռամսյակի վերջին ՁԱԱ-ն հաշվետու եռամսյակի վերջին աշխատանքային օրվա պաշտոնական ՁԱԱ-ն է: Այն հիմնված է հաշվետու եռամսյակի վերջին օրվա կտրման պահի դրությամբ հասանելի գործիքների գների, հաշվեգրված տոկոսագումարների և միջնորդավճարների վրա:

13. Փայերի փոխանակման ընթացակարգը

13.1. Ռեեստրավարը, Մասնակիցների կողմից համապատասխան դիմումը ստանալիս, օգտագործում է Ֆոնդի փայի վերջին հասանելի մարման գինը Ֆոնդի հաշվից փոխանցվելիք դրամական միջոցները հաշվարկելու համար: Փոխանակման արդյունքում այլ կենսաթշակային ֆոնդի (Կառավարչի կամ այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող) թողարկվելիք փայերի քանակը հիմնվում է այդ ֆոնդի վերջին հասանելի բաժանորդագրության գնի վրա: Եթե Մասնակիցը պետք է վճարի հետգնման վճար, ապա Ռեեստրավարը պետք է տեղեկացնի նրան այդ մասին և նշի վճարվելիք գումարի չափը:

13.2. Այն դեպքում, երբ փոխանակման ենթակա փայերը փոխանակվում են Կառավարչի կողմից կառավարվող մեկ այլ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերով, Կառավարիչը Ռեեստրավարի համակարգի միջոցով տեղեկանում է իր՝ տվյալ ֆոնդում փոխանակման ենթակա փայերի քանակի և գումարի վերաբերյալ:

13.3. Այն դեպքում, երբ փայերը փոխանակվում են այլ կառավարչի կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերով, Կառավարիչը հանձնարարում է Պահառուին փոխանցել Ֆոնդի հաշվից համապատասխան գումարները Ռեեստրավարի հաշվին: Փոխանցումը պետք է կատարվի ոչ ուշ, քան Կառավարչի կողմից փայերի փոխանակման վերաբերյալ հաշվետվությունը ստանալու պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում: Պարտավորության հաշվեգրումը պետք է կատարվի համապատասխան փայերի հետգնման օրը:

13.4. Վերոնշյալ գործընթացում Ռեեստրավարի պարտականությունն է առանձնացնել այն հետգնման (մարման) գործարքները, որոնք պահանջում են հետգնման միջնորդավճարի գանձում:

14. Ծրագրային վճարների հաշվարկի և իրականացման ընթացակարգը

14.1. Ծրագրային վճարը Մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա Ֆոնդի փայերի մասնակի մարումների հաշվին ամսական կտրվածքով վճարվող կենսաթոշակ է՝ բաշխված ըստ կյանքի սպասվող տևողության ամիսների:

14.2. Կառավարությունը սահմանում է ծրագրային վճարների հաշվարկման մեթոդաբանությունը և վճարման կարգը:

14.3. Ամսական ծրագրային վճարների մեծությունը Ռեեստրավարի կողմից հաղորդվում է Կառավարչին՝ հիմնվելով ծրագրային վճարի կատարման ամսվա 1-ին աշխատանքային օրվա դրությամբ մարվող Ֆոնդի փայերի թվի և վերջին հայտնի մարման գնի վրա: Ռեեստրավարը նվազեցնում է ծրագրային վճարների կատարմանն ուղղված Ֆոնդի փայերի թիվը ընդհանուր փայերի քանակից և դրամական միջոցները փոխանցում է Մասնակցին մինչև տվյալ ամսվա 10-րդ աշխատանքային օրը:

14.4. Ռեեստրավարը Կառավարչին է ներկայացնում պարբերական հաշվետվություններ, որպեսզի Կառավարիչը հնարավորություն ունենա կանխատեսել իր մոտակա ելքերը և նախանշել կարճաժամկետ և միջնաժամկետ իրացվելիության կառավարման ծրագիրը:

15. Փայերի հետգնումն ապահովագրական ընկերությանը փոխանցելու նպատակով

15.1. Եթե Մասնակիցը ցանկանում է կենսաթոշակը ստանալ Անուիտետի տեսքով, ապա նա Ռեեստրավարին է ներկայացնում գրավոր դիմում՝ նշելով ընտրված ապահովագրական ընկերության և անուիտետի պայմանագրի մասին տեղեկություններ, ինչպես նաև տեղեկություններ մարվող ֆոնդի փայերի և ապահովագրական ընկերությանը տեղեկություններ փոխանցելու մասին:

15.2. Ռեեստրավարը Կառավարչին ծանուցում է մարման պահանջի մասին: Դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Ռեեստրավարը կազմակերպում է Մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարումն ու դրա արդյունքում ստացված միջոցների փոխանցումը Մասնակցի դիմումում նշված ապահովագրական ընկերությանը՝ անուիտետ գնելու նպատակով:

16. Ֆոնդի կառավարչի և պահառուի փոփոխությունը

16.1. Մասնակիցն իրավունք ունի փոխելու իր կենսաթոշակային ֆոնդի կառավարչին և ուղղել իր հետագա կուտակային հատկացումները և/կամ իր առկա ֆոնդի փայերը ցանկացած այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով:

16.2. Պահառուն կարող է իր հայեցողությամբ դադարեցնել Ֆոնդի պահառության պայմանագիրը (պայմանագրի կամավոր դադարում)՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

16.3. Իր հայեցողությամբ պայմանագիրը դադարեցնելու մտադրության դեպքում Պահառուն պարտավոր է ենթադրյալ դադարեցման օրվանից առնվազն 90 օր առաջ այդ մասին տեղեկացնել Կառավարչին, Կենտրոնական բանկին և Ռեեստրավարին:

16.4. Պահառուի լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու, ինչպես նաև Պահառուի սնանկ ճանաչվելու դեպքերում (գործունեության հարկադիր դադարում) Կենտրոնական բանկը պարտավոր է այդ մասին տեղեկացնել Կառավարչին՝ որոշման ընդունման օրվանից հետո՝ 3-օրյա ժամկետում:

16.5. Տեղեկությունը ստանալուց հետո՝ 60-օրյա ժամկետում, Կառավարիչը պարտավոր է պահառության պայմանագիր կնքել այլ պահառուի հետ:

16.6. Ֆոնդի պահառության պայմանագիրը դադարելուց հետո Պահառուն պարտավոր է Ֆոնդի ակտիվները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը փոխանցել նոր պահառուին: Ֆոնդի պահառության պայմանագրի դադարեցման դեպքում Պահառուն պարտավոր է շարունակել կատարել օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով և Կանոններով սահմանված իր պարտականությունները մինչև նոր պահառուի հետ պայմանագրի կնքումը և վերջինիս Ֆոնդի ակտիվների փոխանցումը: Պահառուն շարունակում է պատասխանատվություն կրել մինչև ակտիվները և փաստաթղթերը նոր պահառուին ամբողջությամբ փոխանցելը:

17. Որոշակի գործառնությունների պատվիրակման ընթացակարգը

17.1. ՀՀ տարածքում կատարվող ներդրումների կառավարման գործառույթները չեն կարող պատվիրակվել:

Ֆոնդի կառավարման ավելի արդյունավետ մակարդակ ապահովելու համար Կառավարիչը երրորդ կողմին կարող է պատվիրակել իր գործառույթների որոշակի մասը:

17.2. Այդ գործառույթները ներառում են.

17.2.1. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի, փայերի հաշվարկային արժեքի հաշվարկման գործառույթներ և Ֆոնդի հաշվապահություն,

17.2.2. Ֆոնդի կառավարում ՀՀ տարածքից դուրս ներդրումների գծով,

17.2.3. Այլ գործառույթներ, որոնք չեն բնութագրվում որպես հիմնական ներդրումային կառավարում և ՀՀ օրենսդրությամբ թույլատրված է դրանց պատվիրակումը:

17.3. Որևէ գործառույթի պատվիրակումը չի ազատում Կառավարչին այդ գործառույթի իրականացման՝ օրենսդրությամբ սահմանված իր պատասխանատվությունից: Պատվիրակման բոլոր պայմանագրերը ենթակա են օրենսդրությամբ սահմանված կարգով Կենտրոնական բանկին բացահայտման:

18. Ֆոնդում Կառավարչի սեփական ներդրումների և մարումների ընթացակարգ

18.1. Ֆոնդում սեփական ներդրումներ իրականացնելու համար Կառավարիչը Ռեեստրավարի բանկային հաշվին է փոխանցում համապատասխան դրամական միջոցները՝ նշելով Ռեեստրավարի կողմից տրամադրված հատուկ տարբերակիչ համարը: Կառավարչի հաշվին տեղաբաշխվելիք Ֆոնդի փայերի քանակը որոշվում է փոխանցումն իրականացնելու օրվա դրությամբ հայտնի բաժանորդագրման գնի հիման վրա:

18.2. Ռեեստրավարը թողարկված Ֆոնդի փայերը Կառավարչի հաշվին է փոխանցում գումարը ստանալուց հետո առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում:

18.3. Ռեեստրավարը Կառավարչին տեղեկատվություն է տրամադրում Կառավարչի հաշվին փոխանցված Ֆոնդի փայերի թվի և թողարկման գնի վերաբերյալ՝ Ֆոնդի փայերի թողարկումից հետո առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում:

18.4. Սեփական փայերի հետգնման համար Կառավարիչը Ռեեստրավարի համակարգում ներկայացնում է մարման հայտ՝ մարվող Ֆոնդի փայերի քանակի մասին տեղեկատվությամբ: Մարման արդյունքում ձևավորվող գումարի չափը որոշվում է հիմնվելով վերջին հայտնի մարման գնի վրա:

18.5. Ֆոնդի փայերի մարման մասին հայտ ստանալոց հետո Ռեեստրավարը կազմակերպում է Ֆոնդի փայերի մարումը և համապատասխան դրամական միջոցների փոխանցումը 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ռեեստրավարը պատշաճ կերպով ծանուցում է Կառավարչին և տրամադրում է հաշվետվություն:

18.6. Կառավարչի կողմից հետգնում (մարում) չի թույլատրվում, եթե վերջինիս արդյունքում Ֆոնդում նրա սեփական մասնակցությունը կարող է նվազել օրենսդրությամբ սահմանված նվազագույն մակարդակից: Կառավարչի սեփական մասնակցությունը որոշվում է որպես նրա սեփական փայերի և Ֆոնդի տեղաբաշխված փայերի ամբողջ քանակի հարաբերություն:

19. Մասնակիցներին փոխհատուցման կարգը

19.1. Կառավարիչը պարտավոր է հատուցել Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում տեղի ունեցած էական սխալի պատճառով մասնակիցներին և/կամ Ֆոնդին պատճառված վնասները, որոնք ներառում են.

19.1.1. Ֆոնդի կրած վնասը՝ Ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) մարման գծով մասնակիցներին ավել վճարված կամ Ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) ձեռքբերման համար մասնակիցներից պակաս ստացված գումարի չափով.

19.1.2. համապատասխան մասնակիցների կրած վնասները՝ ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) մարման գծով պակաս ստացված կամ ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) ձեռքբերման համար մասնակիցների ավել վճարած գումարի չափով

19.1.3. Ֆոնդի մասնակիցներին պատճառված այլ վնասներ, որոնք ներառված չեն սույն կետի 19.1.1 և 19.1.2 ենթակետերում:

19.2. Յուրաքանչյուր մասնակցին պատճառված վնասի չափի որոշումը, վնաս կրած անձանց ծանուցումը, ինչպես նաև հատուցումը իրականացնում է Ռեեստրավարը Կառավարչի հաշվին:

19.3. Վնասը համարվում է էական եթե դրա հետևանքով Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի փոփոխությունը գերազանցում է՝

19.3.1. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 0.3 տոկոսը,

19.3.2. Այն չի գերազանցում Ֆոնդի ՁԱԱ-ի 0.3 տոկոսը, սակայն Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով էական է, հաշվի առնելով դրա պարբերական բնույթը, Կառավարչի ներքին հսկողության պատշաճ գործընթացների բացակայության(դրանց չպահպանման) հետևանքով առաջանալու հանգամանքը

20. Տեղեկատվության հրապարակում

20.1. Կառավարչի կողմից տեղեկատվության բացահայտման հիմնական միջոցն է հանդիսանում տեղեկատվության հրապարակումը Կառավարչի ինտերնետային կայքում [www.amundi-acba.am] (այսուհետ՝ «Կառավարչի ինտերնետային կայք»), ինչպես նաև հրապարակումը տպագիր և/կամ էլեկտրոնային մամուլում:

20.2. Կառավարչի ինտերնետային կայքն առնվազն պարունակում է Ֆոնդին վերաբերող հետևյալ տեղեկատվությունը՝

20.2.1. Ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտորի եզրակացությունը: Տարեկան ֆինանսական հաշվետվությունը և աուդիտորական եզրակացությունը պետք է հրապարակվեն նաև ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am):

20.2.2. Ֆոնդի ակտիվների արժեքը, ներառյալ՝ այդ ակտիվների կազմն ու կառուցվածքը, Ֆոնդի փայերի վերջին հաշվարկային արժեքը, ինչպես նաև տեղաբաշխման և հետգնման գները(եթե առկա են) և համապատասխան ամսաթիվը, որի դրությամբ դրանք ներկայացված են,

20.2.3. Ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ տեղեկատվություն՝ ՀՀ ԿԲ-ի կանոնակարգ 10/17-ով սահմանված կարգով,

20.2.4. Ցանկացած այլ տեղեկատվություն, որը կարող է պահանջվել օրենսդրությամբ, կանոնակարգերով և Կառավարչի ներքին իրավական ակտերով:

20.3. Կառավարիչը կարող է իր հայեցողությամբ հրապարակել և բացահայտել ցանկացած այլ տեղեկատվություն՝ օրենքով չարգելված ձևով և շրջանակում, ներառյալ՝ առանց սահմանափակումների ՁԼՄ-ների, էլեկտրոնային և տպագիր փոստի և այլնի միջոցով տարածվող գովազդային նյութերում:

20.4. Տեղեկատվության հրապարակման լեզուն հայերենն է: Կառավարչի հայեցողությամբ հայերեն հրապարակումները և այլ տեսակի բացահայտումները կարող են զուգակցվել այլ լեզուներով թարգմանություններով, ներառյալ՝ Կառավարչի Ինտերնետային կայքերում օտարալեզու հրապարակումները:

21. Ֆոնդի տեսակի փոփոխումը, միացումը և դադարումը

21.1. Ֆոնդի Տեսակի փոփոխությունը, միացումը և դադարումը կարող է իրականացվել օրենսդրությամբ սահմանված կարգով:

22. Կանոնների ընդունումը, փոփոխությունը և վերաշարադրումը

22.1. Սույն Կանոնների ցանկացած փոփոխություն և խմբագրում հաստատվում է Կառավարչի Տնօրենների խորհրդի կողմից, որից հետո Կանոնները 10-օրյա ժամկետում ներկայացվում են Կենտրոնական բանկ: Ներկայացված փոփոխությունները և խմբագրումները ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից գրանցվելու պահից: